ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/11

ք. Երևան «10» Հոկտեմբեր 2018թ.

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Մ. Մակինյանի, որը գործում Կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 764 250 (յոթ հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, գնախաղրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե	Սմարթլայն» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	Ք. Երևան, Վարդանանց 110
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
հ/հ 900011567378	Հ/Հ 16300-7031509
հվհհ 02555816	ՀՎՀՀ 01548908
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար	
Ս.ՄԱԿԻՆՅԱՆ	
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված N 1
«10» մայիսի 2018թ. կնքված
«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	30192220/1	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն,19մմx36մ գրասենյակային, փոքր Pscking Tape	ՉԺՀ ՉԺՀ	Գլանափաթեթված ժապավեն 19 մմ՝ լայնությամբ, ժապավենի երկարությունը՝ 36 մ:	հատ	150	7500	50	Վարդանանց 13ա	50	II եռամսյակ
2	39263400/1	ամրակ DL	ՉԺՀ ՉԺՀ	Ամրակ գրասենյակային մետաղական՝ մեծ, փոքր՝ թղթի տրցակները ամրացնելու համար	տուփ	80	4000	50	Վարդանանց 13ա	50	II եռամսյակ
3	30192230/1	Սկոչ երկկողմանի սոսնձվածքով Pscking Tape	ՉԺՀ ՉԺՀ	Սկոչ երկկողմանի սոսնձվածքով 19 մմ լայնությամբ	հատ	300	1200	4	Վարդանանց 13ա	4	II եռամսյակ.
4	39241210/1	մկրատ, գրասենյակային Scissors	ՉԺՀ ՉԺՀ	մկրատ, գրասենյակային, երկարությունը 15 սմ	հատ	160	960	6	Վարդանանց 13ա	6	II եռամսյակ
5	30197322/1	կարիչ, 20-50 թերթի համար Kangaro	ՉԺՀ ՉԺՀ	Գրասենյակային կարիչ, 30-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	1300	7800	6	Վարդանանց 13ա	6	II եռամսյակ

7	22811150/1	Նոթատետրեր Paperline	ՉԺՀ ՉԺՀ	Փեյփրլայն (Paperline) A7 ձևաչափի սպիռալ 50 էջ	հատ	90	3600	40	Վարդանա նց 13ա	40	II եռամսյակ
8	30197234/1	Թղթապանակ կոշտ կազմով /8սմ, A4/ ALBA RADO	ՉԺՀ ՉԺՀ	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, /8սմ, A4/ (210x297) մմ ձևաչափի թղթերի համար:	հատ	540	54000	100	Վարդանա նց 13ա	100	II եռամսյակ
9	30192128/1	Գրիչ գելային GEL PEN	ՉԺՀ ՉԺՀ	Գրիչ գելային, 0.5 մմ ծայրով, տարբեր գույնի	հատ	80	2400	30	Վարդանա նց 13ա	30	II եռամսյակ
10	39263530/1	Սեղմակ մեծ DL	ՉԺՀ ՉԺՀ	Մետաղական, լայնությունը 41 մմ	հատ	40	16000	400	Վարդանա նց 13ա	400	II եռամսյակ
11	30192111/1	թանաքի բարձիկներ HORSE	ՉԺՀ ՉԺՀ	կնիքի բարձիկ տուփով, միջին 10x7սմ չափի	հատ	240	1200	5	Վարդանա նց 13ա	5	II եռամսյակ
12	30197233/1	Թղթապանակ թելով թղթյա	ՀՀ ՀՀ	Ստվարաթղթի կազմով երկարատև պահման գործերի համար Բ տիպի, A4 ձևաչափի թելակապերով ստվարաթղթի խտությունը՝ 1,15Գ/սմ³, հաստությունը 0.3-1.5մմ	հատ	60	3060	51	Վարդանա նց 13ա	51	II եռամսյակ
13	30192720/1	Գծանշիչ /մարկեր/ Skyglory	ՉԺՀ ՉԺՀ	Տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, տափակ ծայրոցով:	հատ	120	8400	70	Վարդանա նց 13ա	70	II եռամսյակ
14	30197232/1	Թղթապանակ արագակար, թղթյա	ՀՀ ՀՀ	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար:	հատ	50	7500	150	Վարդանա նց 13ա	150	II եռամսյակ
15	30199231/1	Նամակի ծրար, A5 ձևաչափի Libra	ԱՄԷ ԱՄԷ	Ծրարներ չթափանցող, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, սահմանված չափի և հնի: լիբրա (Libra)	հատ	20	8000	400	Վարդանա նց 13ա	400	II եռամսյակ
16	30197234/2	Թղթապանակ կոշտ կազմով /4սմ, A4/ AN PAI	ՉԺՀ ՉԺՀ	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, /4սմ, A4/ (210x297) մմ ձևաչափի թղթերի համար:	հատ	540	16200	30	Վարդանա նց 13ա	30	II եռամսյակ

17	30197231/1	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ Impulse	Իմպուլս-Ա ՓԲԸ ՀՀ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար.արագակալներին ամրացնելու հնարավորություն 40 միկրո :	հատ	7	21000	3000	Վարդանա նց 13ա	3000	II եռամսյակ
18	30192128/2	Գրիչ գելային Uniball	Ճապոնիա Ճապոնիա	Գրիչ, 0,7 մմ ծայրով, տարբեր գույների, գելային Յունիբալ (Uniball)	հատ	690	20700	30	Վարդանա նց 13ա	30	II եռամսյակ
19	30197321/1	կարիչ, մինչև 20 թերթի համար Kangaro	ՉԺՀ ՉԺՀ	Գրասենյակային կարիչ, մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար Կանգարո (Kangaro):	հատ	430	9030	21	Վարդանա նց 13ա	21	II եռամսյակ
20	30192136/1	մատիտն գրաֆիտե տեղադրվող միջուկով Mikro	ՉԺՀ ՉԺՀ	Մատիտ մեխանիկական միջուկը 0.7 մմ	հատ	130	9100	70	Վարդանա նց 13ա	70	II եռամսյակ
21	30197631/1	թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/ Captain	<<Ինտերնեյ շնլփեյփր>> ՓԲԸ ՌԴ	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ², (210X297) մմ.	տուփ	1440	432 000	300	Վարդանա նց 13ա	300	II եռամսյակ-15.12.2018թ.
22	30192710/1	Սոսնձամատիտ գրասենյակային Glues tick	ՉԺՀ ՉԺՀ	Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ և ստվարաթուղթ սոսնձելու համար Քաշը՝ 8 գր.	հատ	100	4000	40	Վարդանա նց 13ա	40	II եռամսյակ
23	30199430/1	թուղթ նշումների համար տրցակներով Impulse	Իմպուլս-Ա ՓԲԸ ՀՀ	Թուղթ սպիտակ, չկպչուն, տրցակով, (7.5X10) մմ	տուփ	90	4500	50	Վարդանա նց 13ա	50	II եռամսյակ
24	39263510/1	Սեղմակ փոքր DL	ՉԺՀ ՉԺՀ	Մետաղա՛յան, լայնությունը 19 մմ	հատ	9	3600	400	Վարդանա նց 13ա	400	II եռամսյակ
25	30199232/1	ծրար մեծ A 4 ձևաչափի	ԱՄԷ ԱՄԷ	1 մ² մակերեսը՝ 80գ. զանգվածով N1 օֆսետային թղթից.	հատ	30	15000	500	Վարդանա նց 13ա	500	II եռամսյակ

		համար Libra		ինքնասոսնձվող Լիբռա (Libra)							
26	30192135/1	գրաֆիտե միջուկ մատիտի համար Sharp Leads	ՉԺՀ ՉԺՀ	գրաֆիտե միջուկ մատիտի համար 0.7 մմ հաստության, HB կարծրությամբ	տուփ	90	6300	70	Վարդանա նց 13ա	70	II եռամսյակ
27	30192100/1	Ռետին հասարակ ML	ՉԺՀ ՉԺՀ	Ռետին՝ փոքր, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար	հատ	50	2500	50	Վարդանա նց 13ա	50	II եռամսյակ
28	30197122/1	Կոճգամ պլաստմասե գլխիկով DL	ՉԺՀ ՉԺՀ	Գունավոր, պլաստմասե գլխիկով մեխիկ	տուփ	180	1800	10	Վարդանա նց 13ա	10	II եռամսյակ
29	39241140/1	դանակ գրասենյակայի ն մետաղյա Cutter	ՉԺՀ ՉԺՀ	դանակ գրասենյակային թուղթ կտրելու համար, 9մմ	հատ	150	3750	25	Վարդանա նց 13ա	25	II եռամսյակ
30	30192160/1	Շտրիխներ Pointer	ՉԺՀ ՉԺՀ	Բաղադրանյութ տպագրված տեքստը մաքրելու համար, ջրային հիմքով, գրչատիպ՝ 7 մլ տարողությամբ	հատ	165	8250	50	Վարդանա նց 13ա	50	II եռամսյակ
31	39263520/1	Սեղմակ միջին DL	ՉԺՀ ՉԺՀ	Մետաղական, լայնությունը 25 մմ	հատ	18	7200	400	Վարդանա նց 13ա	400	II եռամսյակ
32	30192121/1	Գրիչ գնդիկավոր Finegrip	Հնդկաստա ն Հնդկաստա ն	Գնդիկավոր, կապույտ գույնի, Սելլո ֆինեգռիփ (cello Finegrip)	հատ	65	19500	300	Վարդանա նց 13ա	300	II եռամսյակ
33	30199420/1	թուղթ նշումների համար, սոսնձվածքով մեծ Jia Te	ՉԺՀ ՉԺՀ	Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, տարբեր գույների և ձևաչափերի, կպչուն, տրցակով	տուփ	120	7200	60	Վարդանա նց 13ա	60	II եռամսյակ
35	39263200/1	Գրասենյակայի ն գիրք, մատյան 70-200 էջ	<< <<	Համապատասխան ձևաչափերի և տարբեր	հատ	700	35000	50	Վարդանա նց 13ա	50	II եռամսյակ

				չափերի: A4 ֆորմատի տողերով:							
37	30199281/1	ծրար Libra	ԱՄՏ: ԱՄՏ:	Ծրար՝ 22.5 x 11.5 սմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ² մակերեսը՝ 80 գ զանգվածով N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող	հատ	8	12000	1500	Վարդանա նց 13ա	1500	II եռամսյակ

ԳՆՈՐԴ

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011567378
հվհհ 02555816
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար

Մ.ՄԱԿԻՆՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Սմարթլայն» ՍՊԸ
Ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«10» Մայիսի 2018թ. կնքված
«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**								
			մարտ	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30192220/1	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն,19մմx36մ գրասենյակային, փոքր	2625	2625	4500	4500	4500	7500	7500	7500	7500
2	39263400/1	ամրակ	1400	1400	2400	2400	2400	4000	4000	4000	4000
3	30192230/1	Սկոչ երկկողմանի սոսնձվածքով	420	420	720	720	720	1200	1200	1200	1200
4	39241210/1	մկրատ, գրասենյակային	336	336	576	576	576	960	960	960	960
5	30197322/1	կարիչ, 20-50 թերթի համար	2730	2730	4680	4680	4680	7800	7800	7800	7800
7	22811150/1	Նոթատետրեր	1260	1260	2160	2160	2160	3600	3600	3600	3600
8	30197234/1	Թղթապանակ կոշտ կազմով /8սմ, A4/	18900	18900	32400	32400	32400	54000	54000	54000	54000
9	30192128/1	Գրիչ գելային	840	840	1440	1440	1440	2400	2400	2400	2400

10	39263530/1	Սեղմակ մեծ	5600	5600	9600	9600	9600	16000	16000	16000	16000
11	30192111/1	թանաքի բարձիկներ	420	420	720	720	720	1200	1200	1200	1200
12	30197233/1	Թղթապանակ թելով թղթյա	1071	1071	1836	1836	1836	3060	3060	3060	3060
13	30192720/1	Գծանշիչ /մարկեր/	2940	2940	5040	5040	5040	8400	8400	8400	8400
14	30197232/1	Թղթապանակ արագակար, թղթյա	2625	2625	4500	4500	4500	7500	7500	7500	7500
15	30199231/1	Նամակի ծրար, A5 ձևաչափի	2800	2800	4800	4800	4800	8000	8000	8000	8000
16	30197234/2	Թղթապանակ կոշտ կազմով /4սմ, A4/	5670	5670	9720	9720	9720	16200	16200	16200	16200
17	30197231/1	Թղթապանակ,պոլիմերային թաղանթ, ֆայլ	7350	7350	12600	12600	12600	21000	21000	21000	21000
18	30192128/2	Գրիչ գելային	7245	7245	12420	12420	12420	20700	20700	20700	20700
19	30197321/1	կարիչ, մինչև 20 թերթի համար	3160.5	3160.5	5418	5418	5418	9030	9030	9030	9030
20	30192136/1	մատիտն գրաֆիտե տեղադրվող միջուկով	3185	3185	5460	5460	5460	9100	9100	9100	9100
21	30197631/1	թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/	151 200	151 200	259 200	259200	259 200	432000	432000	432 000	432 000
22	30192710/1	Սոսնձամատիտ գրասենյակային	1400	1400	2400	2400	2400	4000	4000	4000	4000
23	30199430/1	թուղթ նշումների համար տրցակներով	1575	1575	2700	2700	2700	4500	4500	4500	4500
24	39263510/1	Սեղմակ փոքր	1260	1260	2160	2160	2160	3600	3600	3600	3600
25	30199232/1	ծրար մեծ A 4 ձևաչափի համար	5250	5250	9000	9000	9000	15000	15000	15000	15000

26	30192135/1	գրաֆիտե միջուկ մատիտի համար	2205	2205	3780	3780	3780	6300	6300	6300	6300
27	30192100/1	Ռետին հասարակ	875	875	1500	1500	1500	2500	2500	2500	2500
28	30197122/1	Կոճգամ պլաստմասե գլխիկով	630	630	1080	1080	1080	1800	1800	1800	1800
29	39241140/1	դանակ գրասենյակային մետաղյա	1312.5	1312.5	2250	2250	2250	3750	3750	3750	3750
30	30192160/1	Շտրիխներ	2887.5	2887.5	4950	4950	4950	8250	8250	8250	8250
31	39263520/1	Սեղմակ միջին	2520	2520	4320	4320	4320	7200	7200	7200	7200
32	30192121/1	Գրիչ գնդիկավոր	6825	6825	11700	11700	11700	19500	19500	19500	19500
33	30199420/1	թուղթ նշումների համար, սոսնձվածքով մեծ	2520	2520	4320	4320	4320	7200	7200	7200	7200
35	39263200/1	Գրասենյակային գիրք, մատյան 70-200 էջ	12250	12250	21000	21000	21000	35000	35000	35000	35000
37	30199281/1	ծրար	4200	4200	7200	7200	7200	12000	12000	12000	12000

ԳՆՈՐԴ

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011567378
հվհհ 02555816
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար

Մ.ՄԱԿԻՆՅԱՆ

/ստորագրություն/

Ս.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Սմարթլայն» ՍՊԸ
Ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908

/ստորագրություն/

Հավելված N 3
«10» դեկտեմբերի 2018թ. կնքված
«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«11» նոյեմբեր 2018թ. կնքված
«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՀԲ-18/11» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն